

**ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՑԱԽՈՒՄ**

**Բանալի բառեր`** Արցախ, Շուշի, հայեր, վիճակագրական տվյալներ, պատերազմներ, գրադարաններ, գրքերի ճակատագրեր, համեմատական վերլուծություններ:

**Keywords:** Artsakh, Shushi, Armenians, statistical data, wars, libraries, fate of books, comparative analysis.

Հայագիտության պատմության մեջ և ժամանակակից գիտական ուսումնասիրություններում առանձնահատուկ տեղ ու նշանակություն ունի Արցախը [Ալիշան, 1993, 121]՝ պատմամշակութային ու հոգևոր կենտրոն Շուշիով: Շուշիի Բերդը կամ Բերդաքաղաքը կառուցվել է Վարանդայի Մելիք-Շահնագարի ցուցումով ու խորհրդով՝ 1752 (կամ 1754) թվականին: Մակայն բերդաքաղաքի պատմությունը կապված է դեռ միջնադարում հիշատակվող Շինաքար բերդանվան հետ (IX դ.)՝ որպես վտանգներից պաշտպանվող ապահով լեռնատեղ: Հետագայում անվանակոչվել է Քարագլուխ, Քարագլխի բերդ, այնուհետև Շուշի բերդ՝ կապված հարևան Շոշ գյուղի անվան հետ: Գեղեցիկ տեղավայրում կառուցված բերդը կոչվել է նաև **Շուշա** անունով. այդ անունը բերդի պարսպի վրա պահպանվում է մինչ օրս: Պատմական գիտությունների դոկտոր Պ. Սեյրանյանի մեկնաբանությամբ՝ Շուշի քաղաքի անունը ծագել է իրանական «շուշա» բառից, որը թարգմանաբար նշանակում է «ապակի» [Сейранян, 1997, 36, 87]: XIX դարում **Շուշա-ն** եղել է Անդրկովկասի տնտեսական ու մշակութային խոշորագույն քաղաքներից մեկը, կարևոր կենտրոն՝ Թիֆլիսից հետո: Մինչև XX դարի սկզբները այստեղ գործել են մի շարք գրադարաններ ու կրթական հաստատություններ՝ խթանելով հասարակական կյանքի հոգևոր զարգացմանը:

Պատմատեղեկատվական ու վիճակագրական տարբեր տվյալներով Շուշիում և ընդհանրապես հայկական Արցախում մշտապես ապրող բնակիչների մեծագույն մասը կազմել են հայերը և միայն: Այդ են հաստատում դարերի ընթացքում Արցախում ստեղծված հայկական մշակութային ժառանգության բազում կոթողները՝ Ամարասը, Գանձասարը, Գտչավանքը, Դադիվանքը և հոգևոր այլ կենտրոններ [Բարսեղյան, 2011, 80]: Աղբյուրների համաձայն միայն 1860 թ. կազմված ընտանեկան ցուցակների տվյալներով Շուշիում բնակվել է 17.484 մարդ, որից 9533-ը՝ հայեր, 1873-ին՝ 22.086 մարդ, այդ թվում՝ 12.476 հայեր [Տեր-Գասպարյան, 1963, 73]: Իսկ 1886 թ. հայ բնակչության թիվը Շուշիում կազմել է 27 հազար [Сейранян, 1997, 16]: Ըստ 1904 թ. Ս. Պետերբուրգում լույս տեսած Բրոկգաուզ-Եֆրոնի հանրագիտարանի, որտեղ Շուշին հիշատակված է **Շուշա**, դարասկզբին այստեղ բնակվել է 25.656 մարդ (այդ թվում՝ 13.282 տղամարդ և 12.374 կին), որից 56.5%-ը՝ հայեր, 43.2%-ը՝ թաթարներ, մնացածները՝ ռուսներ ու հրեաներ [Шуша (ЭС), 1904, Т. 79, 25]:

Հետագայում, սակայն, 1918-1920 թթ. Շուշիում կատարվում է մեծ ողբերգություն. նպատակ ունենալով հաստատել մուսուլմանական իշխանություն, 1918 թ. սեպտեմբերի 25-ին թուրքական բանակը մտնում է Շուշի և 1920 թ. մարտին ենթարկում հրի ու սրի: Տարբեր գնահատումներով զագանաբար սպանվում են 10-30 հազար հայ բնակիչներ: Այդպիսով, պատմական դաժան ճակատագրի հետևանքով Շուշին՝ Ղարաբաղի սիրտը, դադարում է տնտեսական ու մշակութային կենտրոն լինելուց...

Այստեղ տեղին է հիշել 1915 թ. Հայոց մեծ եղեռնը, որին զոհ գնացին ավելի քան 1.5 մլն հայեր: Հարկ է նշել, որ Հայոց եղեռնի մասին վկայող ուսումնասիրությունները շարունակվում են հրատարակվել նաև Հայաստանից դուրս [Перинчек, 2011, 256]:

Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Շուշիի բնակչության թվի վերաբերյալ կան հետևյալ տվյալները. 1923 թ. կազմել է 6000, 1926-ին՝ 5100 բնակիչ [Сейранян, 1997, 16-17]: Իսկ 1959 թ. մարդահամարի տվյալներով՝ 6100 հայ բնակիչ [Տեր-Գասպարյան, 1963, 75]: Ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ մինչև արցախյան ազատագրական առաջին պատերազմը, Ադրբեջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ամբողջ բնակչության թիվը 1979 թ. կազմել է 162.000, այդ թվում՝ 123.000 հայեր և 37.000 ադրբեջանցիներ [Брук, 1986, 785]: Այս փաստը արձանագրել են նաև օտարազգի հեղինակները 1996 թ. Բելգիայում և Ռուսաստանում լույս տեսած գրքում՝ նշված պատերազմի պատճառները, ընթացքը և արդյունքները վերլուծելիս [Спорные границы, 1996, 19]:

Այս բոլոր տվյալները փաստացիորեն վկայում են իրենց պատմական հայրենիքում դարերով ապրած, հարուստ մշակույթ ստեղծած և մի քանի անգամ գերազանցող հայության թվակազմի մասին: Ավելին, 1990-ական թթ. ի վեր՝ մինչև 2020 և 2023 թթ. պատերազմները ազատագրված Արցախում ոչ մի ադրբեջանցի չի ապրել:

Տպագրական գործը Շուշիում հիմք է դրվել հայ տպագրության սկզբնավորումից (Վենետիկ, 1512 թ.) ավելի քան երեք դար հետո: Շուշիում լույս տեսած առաջին գիրքը Հարություն Ջուղայեցի Դավթյանի «Պատմություն Սուրբ Գրոցն» է (1828 թ.), իսկ առաջին պարբերականը 1874 թ. տպագրված «Հայկական աշխարհն» է: Շուշիում են տպագրվել բազմաթիվ և բազմաճյուղ հայալեզու գրքեր ու պարբերականներ, ինչպես նաև օտարազգի հեղինակների գործերի հայերեն թարգմանություններ: Բավական է նշել, որ Շուշիում են առաջին անգամ տպագրվել Բայրոնի «Շիլլոնի կալանավորի» (1837 թ.), Գոգոլի «Տարաս Բուլբայի» (1886 թ.) և Ֆիրդուսու «Ռոստամ և Սոհրաբ» («Շահնամ») վեպի (1893 թ.) հայերեն առաջին թարգմանությունները: Շուշիում են գործել նաև մի շարք մասնավոր տպարաններ, որոնք մինչև XX դարի սկզբները նույնպես այքի են ընկել հայ գրքի ու տպագրական արվեստի զարգացմամբ և ունեն գրքագիտական հետաքրքրություն:

Անհրաժեշտ է նշել, որ Շուշու պատմամշակութային դերն ու նշանակությունը վերաիմաստավորվել ու մեծ գնահատականի է արժանացել XXI դարի առաջին տասնամյակներին՝ Հայկական գրատպության 500, 510 և Շուշիի գրատպության 190 ամյակներին նվիրված գիտաժողովներում: Այդ բոլորի մասին լույս են տեսել գիտական բազմաթիվ հրապարակումներ ու ժողովածուներ [Հայկական տպագրության 500-ամյակը (1512-2012), 2010; Շուշին՝ հայկական, 2014; Սուրբասյան, 2022, №1; Սուրբասյան, 2013; Սուրբասյան 2018, №11 և այլն], որոնք իրենց հերթին ավելի են հարստացնում *արցախագիտության* հարցերով զբաղվողների պատմա-տեղեկատվական ու մշակութաբանական պատկերացումները:

*Հայկական գրադարանների և գրքերի ճակատագիրն արցախյան պատերազմներում:*

Համաձայն մեր ուսումնասիրությունների՝ 1980-ական թթ. վերջերին և 1990-ական թթ. արցախյան ազատագրական պատերազմի ընթացքում ռազմական գործողությունների հետևանքով կործանվել են ավելի քան 220 գրադարաններ, իսկ գրքային ֆոնդերը ենթարկվել են թալանի կամ հրդեհվել...[Սուրբասյան, 2013, 97-98]: Հետպատերազմյան շրջանում՝ XX դարավերջին և XXI դարասկզբին գրադարանային-տեղեկատվական ու գրահրատարակչական գործը Արցախում թևակոխում է նոր փուլ. չնայած մեծ կորուստներին՝ վերականգնվում, համարվում և զարգացման նոր ընթացք են ստանում տարատեսակ գրադարաններ, գիտակրթական ու մշակութային հաստատություններ:

Սակայն Արցախյան **նոր** պատերազմի (2020 թ. սեպտեմբերի 27-նոյեմբերի 9) հետևանքով ադրբեջանցիների հսկողության տակ են մնում հարյուրավոր հայկական գրադարաններ, որոնց ֆոնդերի ընդհանուր գումարը կազմել է 617.000 միավոր գրականություն [Սուրբասյան,

2022, №1, 24], ինչպես նաև «Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանային ֆոնդերը և փաստաթղթատեղեկատվական բազմազան նյութեր, որոնց գոյության մասին ցավոք տեղեկություններ չկան: Ադրբեջանցիների բարբարոսական քաղաքականությունը շարունակվում է 2023 թ., երբ մայիսի 10-ին նրանք ամբողջովին ավերում են 1932 թ. կառուցված Հադրուբի գրադարանի շենքը: Ավելին, 2023 թ. սեպտեմբերի 19-20-ին, ադրբեջանական բանակը հարձակվում է Արցախի Հանրապետության վրա և ամբողջությամբ բռնազավթում: Սկսվում են հայերի բռնի տեղահանումները Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի շրջաններից ու մայրաքաղաք Ստեփանակերտից դեպի Հայաստան: Բռնազավթի դաժան տեսարանները հեռարձակվել են մի շարք լրատվամիջոցներով («Հ1», «5 TV», «Շանթ», «PTP», «Արմենիա», «HTB»): Նախորդ պատերազմից հետո Արցախում մնացած 120 հազար հայ բնակչությունից Հայաստան արտագաղթածների թիվը ՄԱԿ-ի տվյալներով նոյեմբերի 2-ին կազմել է 100.500: Այդպիսով, դադարում է կրթական, գիտական, տնտեսական և մշակութային կյանքը Արցախում: Վտանգի տակ են հայտնվում արցախյան գրադարանները, բռնազավթած մշակութային ողջ ժառանգությունը:

Այսպես, 2021 թ. վիճակագրական տվյալներով Արցախում գործող գրադարաններից Մ. Մաշտոցի անվան հանրապետական գրադարանի ֆոնդը կազմել է 176.766 միավոր, Հովհ. Թումանյանի անվան հանրապետական մանկական գրադարանի ֆոնդը՝ 50.097 միավոր, Ստեփանակերտի Մուրացանի անվան քաղաքային գրադարանինը՝ 48.277 միավոր, Մարտակերտի կենտրոնական գրադարանինը՝ 23.434 միավոր, Մարտունու կենտրոնական գրադարանինը՝ 17.509 միավոր, իսկ Ասկերանի կենտրոնական գրադարանի ֆոնդը՝ 10.522 միավոր [Հայաստանի գրադարանները, 2022, 95-96]: Իհարկե, սրանք դեռ ամբողջը չեն, եթե նկատի ունենանք 2022-ի չհրապարակված տվյալները, ինչպես նաև բուհական, դպրոցական և անձնական (ընտանեկան) գրադարանների գրքային հավաքածուները: Մակայն փաստ է, որ նշված գրադարանների ֆոնդերի ընդհանուր գումարը կազմել է 326.605 միավոր: Ի մի բերելով մեր ուսումնասիրությունների ընթացքում գրանցված բոլոր տվյալները [Մուքիասյան, 2022, №1, 24-25], կարելի է նշել, որ միայն 2020 և 2023 թթ. պատերազմների պատճառով գրքային մշակույթի կորստի ընդհանուր գումարը կազմել է ավելի քան 2 մլն:

Այս ամենը վկայում են Ադրբեջանի շարունակվող հակահայկական ու հայատյաց քաղաքականության մասին. մի կողմից ձգտելով կորցնել հայկական մշակութային ու պատմական հիշողությունը Արցախում, մյուս կողմից շրջանցելով հեղինակային և միջազգային բոլոր օրենքներն ու կոնվենցիաները, անգամ խախտելով 2012 թ. Աստանայում գրադարանավարների միջազգային ֆորումի շրջանակում իրենց իսկ ստորագրած հուշագիրը [Մուքիասյան, 2012, № 4, 6]:

Հարց է առաջանում, արդյո՞ք խորհրդային շրջանում Ադրբեջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղում՝ Արցախում գոյություն է ունեցել ադրբեջանական մշակույթ: Համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս՝ ոչ: Այդ մասին են վկայում ու հաստատում հենց ադրբեջանցի հեղինակները: Այսպես, 1966 թ. Մոսկվայում «Библиотеки СССР» ժողովածուում տպագրված հոդվածում ադրբեջանցի պատմաբան Աբուզար Խալաֆովը գրել է. «Մինչև հեղափոխությունը (1920 թ.) ներկայիս Ադրբեջանի տարածքում չի եղել ազգային գրահրատարակչություն» [Халафов, 1966, вып. 33, 17]: Հետևաբար չի եղել նաև ազգային լեզվով գրականություն, ինչը, մեր կարծիքով, հոգևոր կյանքի զարգացման և գրագիտության մակարդակի բարձրացման կարևոր ցուցանիշներից մեկն էր նախկին հանրապետություններում: Ի դեպ, մինչև 1923 թ. Ադրբեջանում գրականությունը հրատարակվել է հիմնականում հին արաբական տառերով (այբուբենով) [Султанов, 1959, 21]: Այն դեպքում, երբ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը հայերն ու վրացիները ունեցել են ազգային լեզվով մեծ գրականություն: Օրինակ՝ «1913 թ. հայերեն լեզվով լույս է տեսել 263 անուն գիրք 404 հազար տպաքանակով, իսկ վրացերեն լեզվով՝ 296 անուն 478 հազար տպաքանակով» [Драудин, 1934, 168]:

Բացի Ա. Խալաֆովի հոդվածից, 1930 թ. Բաքվում լույս է տեսնում Ա. Սուլթանովի «Ադրբեջանի կուլտուրական շինարարության 10 տարին» հայալեզու գրքուկը՝ ընդգրկելով 1921-1930 թվականները [Սուլթանով, 1930, 28]: Այս հրատարակության մեջ, որը լույս է տեսել 3000 տպաքանակով, փաստական հիմնավորումներով ցույց է տրված Ադրբեջանի քաղաքական-մշակութային կյանքի իրական պատկերը՝ ոչ մի խոսք չասելով հայկական մշակութային ժառանգությամբ հարուստ Լեռնային Ղարաբաղի մասին: Ըստ Ա. Սուլթանովի՝ «Պրոլետարական հեղափոխությունը գտավ Ադրբեջանի աշխատավորներին անչափ հետամնաց, անկուլտուրական վիճակում, որտեղ բնակչության գրագիտության տոկոսը 11.2%-ից բարձր չի կազմել» [Նույն տեղում, 3]: Այդպիսի ցածրակարգ վիճակը պատճառաբանվել է կրթության բացակայությամբ, որը արդյունք էր ցարական և հատկապես մուսաֆաթական կառավարությունների վարած քաղաքականության: «Արմատավորի կրոնը և փակի դպրոցները». այսպես է եղել մուսաֆաթական կառավարության քաղաքականությունը՝ նշել է հեղինակը [Նույն տեղում, 7]:

Ադրբեյջանցի տեղեկանում ենք, որ Ադրբեջանի կուլտուրական շինարարության զարգացման գործում և բնակչության գրագիտության մակարդակը բարձրացնելու նպատակով առաջնակարգ նշանակության է տրվել **«ուսումնական հիմնարկների թուրքացմանը»** [Նույն տեղում, 16-17]: Որպես հեղափոխական իրադարձություն, խնդիր է դրվել «թուրքերեն այբբենի» (այբուբենի) ընդունումը, այդ լեզվով «դասագրքեր հրատարակելը» և «թուրքական կադրեր պատրաստելու» գործի խթանումը: Անհրաժեշտ ուշադրություն է ցույց տրվել աղջիկներին (մանավանդ թրքուհիներին - Ա. Սուլթանով)՝ գրավելու բոլոր կրթական հիմնարկները: Ըստ Սուլթանովի՝ «1919-1920 թթ. սովորող թուրքերի թվից՝ 106.712 հոգուց թրքուհիները կազմել են 24.5% կամ 26.243 հոգի»: Իսկ «5-ամյակի վերջում պլանավորվել է բոլոր տեսակի ուսումնական հիմնարկների մեջ առնել 184.845 կին, որոնցից 103.490 թրքուհի: Միայն խորհրդային շինարարության սիստեմն է, որ կարողացել է ամենայն լայնությամբ դնել թրքուհիներին ամեն տեսակի ուսումնական հիմնարկներ քաշելու հարցը, նրանցից ստեղծելով հարյուր հազարավոր ակտիվ գործիչ-մարտիկներ՝ սոցիալիստական շինարարության համար», - ընդգծել է Ա. Սուլթանովը: Արդեն 1929-30 թթ. գործող 174 բարձրագույն և միջնակարգ դպրոցներում 20.757 սովորողներից 1207-ը եղել են թրքուհիներ [Նույն տեղում, 9-12]: Հետաքրքիր է նաև նշել, որ 1929-30 թթ. բոլոր բարձրագույն դպրոցներն ընդունված ուսանողների 52%-ը կազմել են թուրքերը [Նույն տեղում, 16]: Վիճակագրական տվյալներով՝ ադրբեջանական բուհերում աշխատողների մեծագույն մասը նույնպես կազմել են թուրքերը: Այսպես, թուրք դասախոսների քանակը Ադրբեջանի պետական համալսարանում կազմել է 45.6%, Պոլիտեխնիկական ինստիտուտում՝ 21.1%, Գյուղատնտեսական ինստիտուտում՝ 28.2%, Մանկավարժական ինստիտուտում՝ 90.3%, Գիտահետազոտական ինստիտուտում՝ 51%: Այդ կադրերը, ըստ Սուլթանովի, համարվել են Ադրբեջանում կուլտուրական հեղափոխությունն անցկացնող առաջին ուժերը [Նույն տեղում, 17]:

Խոսելով մասսայական կրթության տարածման գործում գրադարանային ու գրահրատարակչական գործի զարգացման մասին, հեղինակը նշում է, որ 1921-1930 թթ. գործել է 107 գրադարան, որոնցում թուրքալեզու գրքերի թիվը ավելացել է 82 անգամ, իսկ թուրք բաժանորդների թիվը՝ 45 անգամ [Նույն տեղում, 20]: Փաստացիորեն նշված ժամանակաշրջանում «նոր թուրքական այբբենով են անցել ոչ միայն բոլոր աստիճանի դպրոցները, այլև ամբողջ մամուլը, բոլոր պետական և հասարակական հիմնարկների գործավարությունը»: Ընդ որում, «1920-1929 թթ. թուրքական նոր այբբենով հրատարակվել է 841 անուն գիրք, միայն 1929-ին՝ 425 անուն գիրք՝ 1.509.500 օրինակով, իսկ 10 տարվա ընթացքում հրատարակվել են ընդամենը 3.445.759 օրինակ զանազան գրքեր [Նույն տեղում, 24]:

Այսպիսով, պատմա-տեղեկատվական և վիճակագրական համեմատական վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Ա. Սուլթանովի գրքում հստակ պատկերացում չկա «բուն

Ադրբեջանի և ադրբեջանական մշակույթի գոյության մասին», այլ մշտապես խոսվում է թուրքականացված Ադրբեջանի և թուրք-ադրբեջանական մշակույթի զարգացման մասին: Մակայն հստակ է, որ շրջանցելով նա չի հիշատակել հայ գրքի ու ազգային մշակույթի գոյության փաստը Լեռնային Ղարաբաղում:

Այնուհետև, 2003 թ. լույս է տեսնում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գրադարանային-տեղեկատվական և համապատասխան գիտակրթական կենտրոններին ու գործիչներին նվիրված ռուսալեզու գիրք-տեղեկատու [Библиотеки Южного Кавказа, 2003, 305], որում, հատկապես ադրբեջանական բաժնում, որի հեղինակն է Խ. Իսմաիլովը նույնպես խոսք չկա Արցախի (Լեռնային Ղարաբաղ) Հանրապետության **անգամ** Խորհրդային շրջանի գրադարանային գործի պատմության, հարյուրավոր ճանաչված գրադարանների ու գրադարանավարների մասին [Նույն տեղում, 10-103]: Ջարմանալի է, բայց փաստ, որ նման տեղեկատուում արտացոլված չէ նաև հայկական մշակույթի ու քաղաքակրթության կենտրոն Շուշին:

Մեր խորին համոզմամբ, այդպիսի շրջանցումներով ու բացթողումներով հեղինակները թույլ են տվել հակապատմական, գրադարանային-մատենագիտական, կովկասագիտական և մշակութաբանական մեծ սխալ: Կամ՝ իրավացիորեն չեն դիտարկել Արցախը որպես Ադրբեջանի մաս՝ ըստ էության չխախտելով պատմականության սկզբունքը, «պատմության իմաստն ու նշանակությունը» [Яценко, 1991, 527]: Որովհետև Արցախում դարերով ստեղծված հայկական մշակութային (հոգևոր և նյութական) ժառանգությունը ամբողջովին կապված է հայկականության հետ: Մա պատմական ճշմարտություն է, որը հիմնավորվում է պատմա-համեմատական մեթոդով և պահանջվում է լուրջ քննարկում: Մեթոդաբանական այս լրջագույն խնդրի գիտակցումը գերկարևոր է ոչ միայն ազգային պետության, ազգային գրադարանների ու գրադարանային ֆոնդերի անվտանգությունը ապահովելու առումով [Соколов, 2019, №3, 231-247; Столяр, 2013, 473], այլև՝ գիտական հետազոտություններում, կրթական ու սոցիալ հաղորդակցական գործունեության մեջ գրադարանային-մատենագիտական լիարժեք և արժանահավատ տեղեկատվություն սպասարկելու նպատակով: Հետևապես, արդի «տեղեկատվական հասարակության և քաղաքակրթությունների զարգացման անվտանգության» ապահովումն էլ պետք է լինի գերխնդիր՝ անկախ ժամանակի և տարածության ընդգրկումներից [Урсул, 1990, №1, 28-39]:

Կարելի է եզրափակել, որ ազգային մշակույթի անբաժան մասը համարվող Արցախի հայկական մշակութային ժառանգության կորուստը և այդ կորուստը չվերականգնելը կամ բռնազավթած մշակույթը չփրկելը կարող են բացասական հետևանք թողնել Հայաստանում կրթական, գրադարանային-մատենագիտական և տեխնոլոգիական (թվայնացման) գործընթացների ապագա զարգացումների վրա: Լայն իմաստով՝ ճյուղային գիտությունների, դիցուք՝ «Հայաստանի պատմական աշխարհագրության», «Հայագիտական մատենագիտության», «Հայ գրքի, գրադարանների և պարբերական մամուլի պատմության» ընդգրկման սահմանները որոշելու համար:

Այս հիմնախնդիրը, մեր կարծիքով, ժամանակակից գրադարանագիտության և մատենագիտության տեսանկյուններից ունի սկզբունքային նշանակություն և պահանջում է համակարգային լուծում՝ ապահովելով տեսության և պրակտիկայի փոխադարձ կապերը:

## SUMMARY

The Armenians of Artsakh and its famous center Shushi has always been and will continue to be the center of attention of Armenian and foreign Armenian scholars. From that point of view, the article made a scientific reference to the coverage of a number of important issues of contemporary importance: the statistics of Armenians who have permanently lived in Shushi and in Armenian Artsakh in general, the Armenian cultural heritage created in Artsakh for centuries as an integral part of Armenian national culture, the fate of the libraries and books endangered by the wars that took place in recent decades. For this

purpose, a comparative analysis of the used sources was performed, the results of which have historical, bibliographic, librarian and educational significance.

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալիշան Ղ. Արցախ: (Պատմա-աշխարհագր. նկարագրություն), Երևան, ԵՊՀ, 1993, 121 էջ:
2. Բարսեղյան Ա. Արցախի վանքերը / Մասնագիտ. խմբագիր՝ Սլավա Սարգսյան, Ստեփանակերտ, Պոլիգրաֆ, 2011, 80 էջ:
3. Հայաստանի գրադարանները 2021 թվականին: Աշխատանքների վիճակագրական վերլուծություն / Կազմ՝ Լ. Սուրադյան, Երևան, ՀԱԳ, 2022, 101 էջ:
4. Հայկական տպագրության 500-ամյակը (1512-2012): Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում: Հանրապետական գիտաժողովի զեկուցումների ժողովածու (2010 թ. ապրիլի 15-16) / խմբ.՝ Ա.Վ. Գալստյան, Գ.Ա. Սուքիասյան, Երևան, Մանկավարժ, 2010, 132 էջ:
5. Շուշին՝ հայկական մշակույթի օջախ: Հայ գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտ. կոնֆերանսի զեկուցումներ, Շուշի, Կաճառ գիտ. կենտրոն, 2014, 240 էջ:
6. Սուլթանով Ա. Ադրբեջանի կուլտուրական շինարարության 10 տարին, Բագու, Ադրպետհրատ, 1930, 28 էջ:
7. Սուքիասյան Գ. Հայկական գրատպության 510-ամյակը (1512-2022 թթ.) // Հայագիտական հանդես, Երևան, ՀՊՄՀ, 2022, № 1(55), էջ 15-30:
8. Սուքիասյան Գ. Գրադարանավարների միջազգային ֆորում Աստանայում // Հայաստանի Հանրապետ., 2012 հոկտ. 4, № 180, էջ 6:
9. Սուքիասյան Գ. Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն: Նվիրվում է հայկ. տպագրության 500-ամյակին, Երևան, Էդիթ Պրինտ, 2013, 160 էջ:
10. Սուքիասյան Գ. Նշվեց Շուշիի գրատպության 190-ամյակը // Մանկավարժական համալսարան, 2018. սեպտ. 14, № 11 (1028), էջ 5:
11. Տեր-Գասպարյան Ռ. Շուշու բնակչությունը 18-րդ դարից մինչև մեր օրերը // Տեղեկագիր (ՀՍՍՌ գիտությունների ակադեմիա, Հասարակական գիտություններ), Երևան, ՀՍՍՌ ԳԱ. Հրատ, 1963, № 9, էջ 67-76:
12. Библиотеки Южного Кавказа и кто есть кто в библиотечной сфере: Справочник / Под ред. К. Арабян, Ереван, Армянская библиотечная ассоциация, 2003, 305 с.
13. Брук Соломон Население мира. Этнодемографический справочник. Изд. 2-е, Москва, Наука, 1986, 832 с.
14. Драудин Т. Очерки издательского дела в СССР (с кратким историческим введением) / Под общей. ред. Н. Накаркивав, Москва, Л., 1934, 230 с.
15. Перинчек М. Армянский вопрос в 120 документах из российских государственных архивов, Москва, Лаборатория Книги, 2011, 256 с.
16. Сейранян П.А. Карабах и Россия. Страницы истории / П.А. Сейранян, Москва, Христианское издательство, 1997, 154 с.
17. Соколов А.В. Национальная безопасность и национальная библиотека // Библиотековедение, 2019, Том 68, № 3, С. 231–247.
18. Спорные границы на Кавказе / Под ред. Бруно Коптера, Москва, Весь мир, 1996, 227 с.
19. Столяров Ю. Н. Безопасность библиотечного фонда, Москва, Литера, 2013, 473 с.
20. Султанов М. Кязимов Р. и др. Книга, графика, плакат Азербайджана, Баку, Азербайджанское гос. изд-во, 1959, 70 с.
21. Урсул А.Д. Информационное общество и безопасность развития цивилизации // Соц.-психолог. науки. Москва. 1990, № 1, С. 28–39.
22. Халафов А.А. Библиотечное дело в советском Азербайджане в 1920-1925 гг. // Библиотеки СССР. Опыт работы, Вып. 33, Москва, 1966, С. 16–27.

23. Шуша // Энциклопедический словарь Брокгауза и Эфрона, Т. 79, СПб, Изд. Брокгауза и Эфрона, 1904, С. 25–26.
24. Ясперс Карл Смысл и назначение истории, Москва, Изд-во «Политической литературы», 1991, 527 с.